ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԼԱՅԱՐՈՑՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 25 (16322) ՇԱԲԱԹ, 11 ԱՊՐԻԼԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ՝ ԶԱՏԿԻ ԱՌԹԻՎ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Վրաստանի հայությանը շնորհավորեց Սուրբ Հարության տոնի առթիվ: Շնորհավորական ուղերձում ասված է.

«Թանկագին բարեկամներ:

Ի սրտե շնորհավորում եմ Սուրբ Հարության պայծառ տոնի առթիվ:

Այս հիանալի տոնը մենք առնչում ենք համընդհանուր նորացմանն ու լավագույն ապագայի հույսին: Նորացման սույն հավատը թող բարեկեցություն, խաղաղություն եւ երջանկություն բերի ձեր ընտանիքներին ու մեր հայրենիքին»:

Սուրբ Հարության տոնի առթիվ ի սրտե շնորհավորում եմ ձեզ՝ Վրաստանի քաղաքացիներին եւ Հայ Առաքելական եկեղեցու աշխարհասփյուռ բոլոր հավատացյալներին:

Հայերի ու վրացիների բարեկամությունը հազարամյակների պատմություն ունի: Մեր Առաքելական հինավուրց եկեղեցիների հարաբերությունն ու համագործակցությունն այդ պատմության անկապտելի մասն են կազմում:

Անգնահատելի է ձեր ավանդը Վրաստանի պետականության ամրապնդման եւ հասարակության զարգացման գործում:

Մաղթում եմ խաղաղություն, առողջություն եւ բարեկեցություն ձեր ընտանիքներին»,- ասված է նախագահի շնորհավորական ուղերձում:

Ապրիլի 5-ին Սուրբ Հարության՝ Սուրբ Զատկի տոնը նշող Վրաստանում գործող կրոնական միավորումների հավատացյալներին տոնի առթիվ շնորհավորական ուղերձ հղեց նաեւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետի ուղերձում ասված է. «Այսօր քրիստոնեական աշխարհի մեծ մասը նշում է Սուրբ Հարության տոնը: Շնորհավորում եմ բոլոր մեր այն համերկրացիներին, ում համար ապրիլի 5-ը Սուրբ Զատկի պայծառ տոնի օրն է:

Հարությունը համընդհանուր նորացման, կյանքի տոն է, եւ մեծագույն ուրախություն՝ բոլոր քրիստոնյաների համար: Միանում եմ բոլոր մեր համերկրացիների այս մեծ ուրախությանը, մաղթում նրանց խաղաղություն եւ առաջընթաց»:

Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալներին Սուրբ Հարության տոնի առթիվ շնորհավորեց նաեւ Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին.

«Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի հավատացյալներին, մեր համերկրացիներին շնորհավորում եմ Սուրբ Հարության՝ Սուրբ Զատկի պայծառ տոնի առթիվ: Ցանկանում եմ մաղթել խաղաղություն, բարեկեցություն եւ երջանկություն: Հայ ժողովուրդը վրաց բազմազգ հասարակության անկապտելի ու հպարտության արժանի հատվածն է: Մենք ջանք չենք խնայի հայ ազգի ինքնության, մշակույթի, լեզվի եւ ավանդույթների պահպանման համար»,- ասված է Պաատա Զաքարեիշվիլու շնորհավորական ուղերձում:

ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

2015 թվականի ապրիլի 5-ին վիրահայությունը մեծ հանդիսությամբ, Հայ եկեղեցու կանոններով եւ արարողակարգերի համաձայն, նշեց Սուրբ Հարության տոնը՝ Սուրբ Զատիկը:

Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցում կատարվեց ժամերգություն, Անդաստանի արարողություն, ապա Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության կապակցությամբ մատուցեց Սուրբ եւ Անմահ պատարագ, որին ներկա էին Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետներ, համայնքային պաշտոնյաներ, կրթության եւ մշակույթի գործիչներ, բազում հայորդիներ:

Հավարտ Սուրբ եւ Անմահ պատարագի, թեմական առաջնորդը շնորհավորեց հավատացյալներին Սուրբ Զատկի առթիվ, եւ օրվա խորհրդի մասին քարոզում հիշատակեց

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ TV МИР-ԻՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՀԱՄՈԶՎԱԾ ԵՄ՝ ՉԻ ԳԱ ԺԱՄԱՆԱԿ, ԵՐԲ ՄԵՆՔ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՎԱՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆԱՆՔ»

Ապրիլի 8-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Մոսկվայում հատուկ հարցազրույց տվեց ռուսաստանյան «МИР» հեռուստաընկերությանը: Հարցազրույցում Հայաստանի նախագահը խոսեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի մասին, անդրադարձավ Հայաստանի համար Եվրասիական տնտեսական միության նշանակությանը, Ռուսաստանի եւ ԱՊՀ մյուս երկրների հետ հարաբերություններին: Բնականաբար, Սերժ Սարգսյանը անուշադրության չմատնեց նաեւ Հայաստանի համար Վրաստանի նշանակության հարցը:

Հարց.- Եվրասիական տնտեսական միության նկատմամբ Վրաստանի դիրքորոշումը արգելքներ չի հարուցո՞ւմ, արդյոք, Հայաստանի համար:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ.- Կարծում եմ՝ ոչ: Բոլոր դեպքերում մենք արդեն երեք ամիս է, ինչ ԵԱՏՄ-ի անդամ ենք եւ Վրաստանի կողմից ոչ մի արգելքի չենք հանդիպել: Բնականաբար, մենք բոլորս՝ հայերը, ռուսները, բելառուսները, ղազախները, ղրղզները, մեր համապատասխան մարմինները ընկալումով պետք է մոտենանք այդ տնտեսական շուկայի ձեւավորմանը,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՊՐԻԼԻ 9-Ը՝ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

26 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԹԱՓՎԱԾ ԱՐՅՈՒՆՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԱՆՑ ԱՐՏԱՅՈԼՎԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐՈՒՄ

Ապրիլի 9-ին Վրաստանը նշեց ազգային միասնության, քաղաքացիական համաձայնության, հայրենիքի համար զոհվածների հիշատակի օրը:

Հատատվածավանդույթի համաձայն այդ օրը թբիլիսցիները, ի հիշատակ 26 տարի առաջ՝ 1989 թվականին, Թբիլիսիում խորհրդային զորքերի կողմից բազմահազարանոց հանրահավաքի ցրման զոհվածների, ծաղիկներ դրեցին նախկին խորհրդարանի շենքի աստիճաններին:

Հանրահավաքի ցրման հետեւանքով զոհվեց 21 մարդ, որոնց մեծամասնությունը կանայք էին:

1989 թվականի ապրիլի 9-ի այդ օրը, կամ ինչպես այն հետո սկսեցին անվանել «արյունոտ կիրակին», բեկումնային դարձավ Վրաստանի համար: Ուղիղ երկու տարի անց՝ 1991 թվականի ապրիլի 9-ին, ազգային շարժման առաջնորդ, Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիան հայտարարեց Վրաստանի անկախության վերականգնման մասին:

Ապրիլի 9-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ առաջին տիկին Մակա Չիչուան ծաղիկներ դրեցին Թբիլիսիի խորհրդարանի շենքի մոտ Ապրիլի 9-ի զոհերի հուշակոթողին: «1989 թվականին այստեղ հեղված հայրենասերների անմեղ արյունը երկու տարի անց արտացոլվեց Վրաստանի անկախության ակտում: Բնականաբար, մենք ամեն տարի հարգելու ենք այն մարդկանց հիշատակը, ովքեր այստեղ պաշտպանում էին ապագա պետականությունը, եւ մենք շնորհակալություն ենք հայտնում նրանց այն ավանդի համար, որն անկախություն բերեց Վրաստանին»,- հայտարարեց Մարգվելաշվիլին:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ապրիլի 9-ին հարգանքի տուրք մատուցեց 1989 թվականի ողբերգության զոհերի հիշատակին՝ մասնակցելով հիշատակի միջոցառումներին եւ ծաղկեպսակ դնելով Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայում երկրի խորհրդարանի հին շենքի մոտ, որտեղ 26 տարի առաջ խորհրդային զորքերը դաժանորեն ցրեցին խաղաղ հանրահավաքը:

Թբիլիսիում, Ռուսթավելու պողոտայում գտնվող Ապրիլի 9-ի զոհերի հուշակոթող այցելեցին նաեւ Վրաստանի օրենսդիր եւ գործադիր իշխանությունների ներկայացուցիչներ, դիվանագետներ:

Հուշակոթող այցելեց նաեւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը:

ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔԸ ԱՊՐԻԼԻ 9-Ի ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 9-ին, Վիրահայոց թեմի եւ թբիլիսահայ համայնքի ներկայացուցիչները՝ Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Սամվել քահանա Թորոսյանի գլխավորությամբ, հարգանքի տուրք մատուցեցին 1989 թվականի ապրիլի 9-ին Վրաստանի անկախության համար զոհվածների հիշատակին:

Վրաստանի խորհրդարանի առջեւ կանգնեցված հուշակոթողի առջեւ պատվիրակության անդամները աղոթեցին զոհվածների հոգիների խաղաղության համար եւ թեմի ու համայնքի անունից ծաղկեպսակ խոնարհեցին հուշակոթողին:

Այնուհետեւ, Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու մերձակա տարածքում Ապրիլի 9-ի զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ: Խորհրդանշական է, որ հավատացյալների հետ միասին արարողությանը ներկա էին Վիրահայոց թեմի Սուրբ Մովսես Խորենացի նախակրթարանի սաները, նրանց մանկավարժներն ու ծնողները: Տեր Սամվել քահանա Թորոսյանը աղոթք բարձրացրեց եւ «Հոգվոց» կարդաց Վրաստանի անկախության ու պետականության վերականգնման համար նահատակված 21 անմեղ զոհերի հիշատակին:

(Խորագրի շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՈՒԺԵՂ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ-ՈՒԺԵՂ ՎՐԱՍՏԱՆ»

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐՆ ԱՆՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ»

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻՈՒՄ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եղավ Քվեմո Քարթլիի տարածաշրջանում եւ այնտեղ անցկացրեց «Ուժեղ տարածաշրջան-ուժեղ Վրաստան» նախագծի շնորհանդեսը:

Մինչ այդ, վարչապետը Ռուսթավիում հանդիպում ունեցավ տարածաշրջանային վարչության, մունիցիպալիտետների ղեկավարների հետ: Հանդիպմանը մունիցիպալիտետների ղեկավարները վարչապետին տեղեկատվություն ներկայացրին երկրամասում իրականացվող նախագծերի ընթացքի եւ իրականացվելիք աշխատանքների մասին:

Մառնեուլիում, տեղի գործարարների հետ հանդիպմանը, Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ նոր նախագծի գլխավոր նպատակը երկրի տարածաշրջանների ռազմավարական եւ տնտեսական զարգացման ապահովումն է:

«Հարկ է արդյունավետ քայլեր կատարել տարածաշրջանների զարգացման ուղղությամբ: Դրան կհետեւի տեղի բնակչության զբաղվածության հարցի կարգավորումն ու արտադրությունների վերականգնումը»,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքերով, Քվեմո Քարթլիում նշանակալի աշխատանքներ են իրականացվել: Միայն անցյալ տարվա ընթացքում իրականացվել է 47 միլիոն դոլարի անմիջական ներդրում: Ներդրումները հիմնականում իրականացվել են վերամշակող արդյունաբերության, լեռնարդյունաբերության, էներգետիկայի, անշարժ գույքի, տրանսպորտի եւ կապի ոլորտներում:

Վարչապետի հավաստմամբ, իշխանությունները առանձնակի ուշադրություն են հատկացնում կրթական ոլորտին, մասնավորապես՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին պետական լեզվի ուսուցման ծրագրին:

«Քվեմո Քարթլիում վերանորոգվել է 119 դպրոց, կառուցվել երկու նոր դպրոց, վերականգնվել է մասնագիտական ուսումնարանը: Կրթօջախների վերանորոգման աշխատանքներն այս տարի կշարունակվեն:

Ընթացիկ տարվա համար ծրագրում ենք վերանորոգել 40 դպրոց, կառուցել նոր դպրոց, նախագծման փուլում է Մառնեուլիի թիվ 1 դպրոցի նոր շենքը: Մենք մանրամասն ուսումնասիրում ենք տարածաշրջանի դպրոցների վիճակը, որպեսզի հստակորեն իմանանք, թե որոնք ունեն վերանորոգման կարիք:

Այսօր կառավարությունը հնարավոր ամեն ինչ անում է, որպեսզի ազգային փոքրամասնությունները կարողանան իրացնել իրենց հնարավորությունները եւ ինտեգրվեն վրաց հասարակության: Այդ նպատակով, երիտասարդության համար մշակել ենք հատուկ ծրագիր: Ծրագրի նպատակն է վրաց լեզվի ուսուցումը: Դա արդի չափորոշիչներով հետաքրքիր ծրագիր է, որի շնորհիվ Քվեմո Քարթլիում բնակվող ազգային փոքրամասնությունները կարողանան օնլայն ռեժիմով անվճար տիրապետել պետական լեզվին: Դա, իրոք, հիանալի հնարավորություն է կրթական մակարդակի բարձրացման եւ պետական լեզվի ուսուցման աջակցության համար»,- հայտարարեց վարչապետը:



ՈՒԶԲԵԿՍՏԱՆ
ԻՍԼԱՄ ՔԱՐԻՄՈՎԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

Ուզբեկստանի նախագահ վերընտրված Իսլամ Քարիմովի պաշտոնակալման արարողությունը անցկացվեց երեկ՝ ապրիլի 10-ին: Նշենք, որ ապրիլի 6-ին երկրի ԿԸՀ-ն ամփոփեց մարտի 29-ին անցկացված նախագահական ընտրությունների վերջնական արդյունքները, որոնցում Իսլամ Քարիմովը հավաքել էր ձայների 90,39 տոկոսը՝ ընտրողների 91,08 տոկոս մասնակցության դեպքում: Ըստ ԿԸՀ-ի տվյալների, ձայնի իրավունք ունեցող 20,798 մլն ընտրողներից ընտրություններին մասնակցել են 18,942 միլիոնը: Ընտրություններն անցել են 9058 տեղամասերում: Ուզբեկստանի օրենսդրությանը համապատասխան, Ուկզբեկստանի նախագահը պաշտոնն ստանձնում է խորհրդարանի նիստում երդմնակալության պահից, որը պետք է տեղի ունենա ԿԸՀ-ի կողմից ընտրությունների արդյունքների պաշտոնական հայտարարման օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

ՈՒԿՐԱԻՆԱ
ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾ ՅԱՆՈՒԿՈՎԻՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Սահմանադրական դատարանի դատավորների եւ մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանցավոր նախահամաձայնության մեղադրանքով, երկրում սահմանադրական կարգի փոփոխման եւ իշխանության բռնակալության նպատակով, Ուկրաինայի անվտանգության ծառայությունը նոր քրեական գործ է հարուցել երկրի նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչի նկատմամբ: Նշենք, որ դեռեւս փետրվարին Ուկրաինայի Գլխավոր դատախազությունը Յանուկովիչին մեղադրել էր հանցավոր կազմակերպության ստեղծման մեջ՝ իշխանության բռնակալության նպատակով: Յանուկովիչի կառավարման ժամանակ ճնշում է գործադրվել Սահմանադրական դատարանի վրա, որը չեղյալ է հայտարարել 2004 թվականի սահմանադրական բարեփոխումը եւ երկրում վերականգնել կառավարման նախագահական-խորհրդարանական ձեւը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՆԱՏՕ-Ի ՀԵՏ

Ուկրաինան ՆԱՏՕ-ի հետ կստորագրի երկու համաձայնագիր: Այդ մասին հայտարարել է երկրի վարչապետ Արսենի Յացենյուկը: Առաջին փաստաթուղթը հուշագիր է կապի եւ տեղեկատվության վերաբերյալ, երկրորդը՝ համաձայնագիր աջակցման ոլորտում համագործակցության մասին: Հուշագրի համաձայն, Ուկրաինան կոնսուլտացիաների, կառավարման, կապի, հետախուզության եւ այլ հարցերում ՆԱՏՕ-ի հետ համագործակցելու է «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Երկրորդ փաստաթղթով նախատեսվում է ՆԱՏՕ-ի հետ համատեղ իրագործել չորս նախագիծ, որոնք վերաբերում են ռազմատեխնիկական համագործակցության, կապի միջոցների, նոր հաղորդակցությունների եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին:

ՄՈԼՈՐԱԿ
ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ՈՐԲԱՑՐԵԼ Է 25 ՀԱԶԱՐ ԵՐԵԽԱՅԻ

Street Child բարեգործական կազմակերպությունը նախազգուշացրել է, որ էբոլա տենդի բռնկումից տուժած երկրների վերականգնման գործընթացում մոռանում են վիրուսի պատճառով որբացած աֆրիկացի երեխաներին: Հաշվետվության մեջ ասված է, որ էբոլայի համաճարակի պատճառով Արեւմտյան Աֆրիկայում 25 հազար երեխա մնացել է առանց ծնողների: Street Child-ի հիմնադիր Թոմ Դենեթը BBC-ին պատմել է, որ որբերը, հատկապես՝ աղջիկները, սնունդ հայթայթելու համար հարկադրված են զբաղվել մարմնավաճառությամբ: Դենեթի կարծիքով, առողջապահական կազմակերպություններն անուշադրության են մատնել երեխաներին՝ բոլոր ուժերը նպատակամղելով կյանքեր փրկելուն:

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ TV МИР-ԻՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՀԱՄՈԶՎԱԾ ԵՄ՝ ՉԻ ԳԱ ԺԱՄԱՆԱԿ, ԵՐԲ ՄԵՆՔ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՎԱՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆԱՆՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նոր հարաբերությունների առաջին փուլին: Կլինեն շատ մեծ փոփոխություններ, անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված, որ հարմարվենք: Հայաստանը առավելագույն բարյացակամությամբ է վերաբերվում այդ գործընթացին եւ նման տրամադրվածության կոչ է անում մյուս երկրներին: Նման մոտեցմամբ մենք նպաստում ենք Եվրասիական տնտեսական միության հաստատմանը:

Հարց.- Դուք հարցազրույցի սկզբում հիշատակեցիք ռազմական համագործակցությունը: Փաստ է, որ Հայաստանը Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի կազմակերպության (ԿԱՊԿ) անդամ է, իսկ նրա մերձավոր հարեւանը՝ Վրաստանը, միտված է այլ ռազմական բլոկի՝ ՆԱՏՕ-ի ուղղությամբ: Ի՞նչ վերաբերմունք ունեք նման իրավիճակի նկատմամբ:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ.- Մենք Վրաստանի հետ շատ լավ հարաբերություններ ունենք, հետեւաբար պարտավոր ենք հարգանքով վերաբերվել մեր հարեւանի ընտրությանը: Միաժամանակ գտնում ենք, որ տարբեր միություններ մուտք գործելու կամ իր ազգային առաջնահերթությունների հստակեցման ժամանակ յուրաքանչյուր երկիր պետք է ելնի նրանից, որ դա բացասաբար չանդրադառնա տարածաշրջանի ընդհանուր իրավիճակի վրա:

Մենք ելնում ենք նաեւ նրանից, որ անվտանգությունը անբաժանելի է եւ փոխլրացնող: Այսօր՝ 21-րդ դարում, այնքան մարտահրավերներ են, որ պետությունը միայնակ ի վիճակի չէ հաղթահարելու բոլոր այդ մարտահրավերները եւ, հետեւաբար, միավորումներում ընդգրկվելը՝ անհրաժեշտություն է: Կրկնում եմ, այսօր ամենակարեւորն այն է, որպեսզի Հայաստանի գտնվելը ռազմական մեկ միությունում եւ Վրաստանի գտնվելը կամ համագործակցությունը այլ ռազմական միության հետ, չհանգեցնի մեր տարածաշրջանում իրավիճակի վատթարացմանը: Հետեւաբար, մեր երկրների կայունության պահպանման հարցում շատ բան կախված է Վրաստանի դիրքորոշումից:

Համոզված եմ՝ չի գա ժամանակ, երբ մենք Վրաստանի հետ հենց այդ պատճառով վատ հարաբերություններ ունենանք: Կարծում եմ, որ վրացական ղեկավարության մոտ էլ իրավիճակի նման ընկալում է: Մինչ օրս մենք Վրաստանի կողմից չենք տեսել որեւէ քայլ, որը կարող էր հանգեցնել մեր հարաբերությունների սրման:

ԱՊՐԻԼԻ 9-Ը՝ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅՈՒՄ ՆՇՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Ապրիլի 9-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետում հարգանքի տուրք մատուցվեց 1989 թվականի թբիլիսյան ողբերգության զոհերի հիշատակին:

Մունիցիպալիտետի ղեկավարությունը, բնակիչները ծաղկեպսակներ դրեցին Ապրիլի 9-ի հուշակոթողին: Ապա մունիցիպալիտետի մշակույթի կենտրոնում անցկացվեցին միջոցառում՝ նվիրված Ապրիլի 9-ին Վրաստանի ազգային միասնության, քաղաքացիության համաձայնության եւ հայրենիքի համար զոհվածների հիշատակի օրվան:

Նշենք, որ այս տարի շրջկենտրոնի Հայոս-Քարթլոս զբոսայգում տեղի ղեկավարության նախաձեռնությամբ տեղակայվեց Ապրիլի 9-ի զոհերին նվիրված հուշակոթող:

ՍՈՒՐԲ ՁԱՏԻԿ

ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Փրկչի Հարության նման Ցեղասպանության ջարդից հարություն առած, հայրենազրկված ու աշխարհով մեկ սփռված հայությանը, ով կրկին, կերտելով իր պատմությունը, կառուցում է իր տաճարները, պահպանում հայոց լեզուն, գրոց բարբառը եւ ամենուրեք հնչեցնում է իր շարականները:

Սրբազան հայրը շնորհավորանքի խոսքեր ուղղեց նաեւ Վրաստանի քրիստոնյա ժողովրդին, ով ապրիլի 5-ին նշում է Ծաղկազարդի տոնը:

Հիսուս Քրիստոսի Հարության տոնին նվիրված Սուրբ պատարագներ մատուցվեցին Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի, Բաթումիի բոլոր հայկական եկեղեցիներում:

ՁԱՏԿԱԿԱՆ ՆՎԵՐՆԵՐ՝ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՎ ՄԻԱՅՆԱԿՆԵՐԻՆ

Ապրիլի 4-ին, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում, անապահով ընտանիքներին եւ միայնակ ծերերին բաժանվեցին զատկական նվերներ:

Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության նախաձեռնությամբ, Վիրահայոց թեմի, եկեղեցու հոգեւոր հայրերի, եկեղեցու կնքահոր, «Արմենիա» խանութի, «Հայկական լավաշ» ընկերության եւ այլ հավատացյալների աջակցությամբ, Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի նախօրեին տոնական բարիքներով նվերներ ստացան 100-ից ավելի թբիլիսաբնակ բազմանդամ ու սոցիալապես անապահով ընտանիքներ, միայնակ եւ հաշմանդամ ծերեր:

Զատկական նվերներ բաժանելու գործողությունը Վիրահայոց թեմում արդեն դարձել է բարի ավանդույթ, որ մեծ սիրով իրականացվում է Հավլաբարի հայոց եկեղեցում: Հետամուտ լինելով Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնը բոլոր ընտանիքներում տոնական դարձնելու նպատակին՝ թբիլիսահայ հավատացյալներն իրենց օգնությունն են ցուցաբերում դրա կարիքն ունեցող ընտանիքներին: